ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 45 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 15-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի N 892-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետը .

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ) առաջին անգամ ատեստավորում չանցած ոստիկանության ծառայողների առաջին անգամ ատեստավորումը, ինչպես նաև՝ առաջին անգամ ատեստավորում անցած ոստիկանության ծառայողների միայն հաջորդ ատեստավորման գործընթացի կազմակերպչական աշխատանքները սկսել 2026 թվականի հուլիսի 3-ից:

2. Ատեստավորման մեկնարկի օր սահմանել 2026 թվականի օգոստոսի 3-ը «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ Կրթահամալիր)՝ յուրաքանչյուր խմբի համար ընդհանուր առմամբ հինգ աշխատանքային օր տևողությամբ յուրաքանչյուր օրվա համար սահմանելով սկիզբ ժամը 9.00-ն, ավարտը՝ 18.00-ն:

3. Ատեստավորմանը մասնակցելու համար զեկուցագրերի ընդունման սկիզբ սահմանել 2026 թվականի հուլիսի 3-ը, ավարտը՝ 2026 թվականի օգոստոսի 3-ը:

4. ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարին ՝

1) սահմանել հսկողություն ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների ատեստավորման նախապատրաստական ու կազմակերպչական բնույթի աշխատանքների և անցկացման գործընթացի նկատմամբ,

2) կազմակերպել ատեստավորման արձանագրությունների և գրավոր եզրակացությունների հիման վրա ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների հավելավճար հաշվարկելու գործընթացը:

5. Կրթահամալիրի ռեկտորին՝ ապահովել անհրաժեշտ պայմաններ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների ատեստավորման անցկացման համար:

6. Կրթահամալիրի ռեկտորին, ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության, ՀՀ ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների պետերին՝

1) ատեստավորմանը մասնակցող ծառայողների անվանացուցակները ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում իրազեկել անձնակազմին,

2) ատեստավորման անցկացման օրը և դրա նախորդող երկու օրը՝ ծառայողին ազատել ծառայողական պարտականությունների կատարումից՝ ատեստավորմանը մասնակցելու համար:

7. Սույն հրամանը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողներին էլեկտրոնային եղանակով կամ գրավոր ծանոթացնելու վերաբերյալ ամփոփաթերթը կցել փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության համապատասխան ստորաբաժանումներում:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

9. Հրամանն իրազեկել ՀՀ ՆԳՆ ծառայողներին և աշխատողներին:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

02.07.2026թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ